

և թիվ 43 բնակելի տների տնամերձ հողամասերի սահմանամերձ երկայնքով 34,2 քառ. մետր մակերեսով Ա.Խաչատրյանին պատկանող և Շ.Սարգսյանի կողմից ապօրինի օգտագործվող հողատարածքը՝ դատաշինարարատեխնիկական փորձագետի առ 01.12.2010թ. Հմ 23013/10 եզրակացության հավելված 4-ին համապատասխան:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2011թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ պատասխանող Շ.Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. ապրիլի 8-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան, լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել հայցվոր Արամայիս Հարությունի Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել պատասխանողի ներկայացուցիչ Ա.Թարխանյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է ներքոհիշյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Բողոքը բերվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով, որոնք ազդել են գործի էլքի վրա:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ և 49-րդ հոդվածների պահանջները՝ ճիշտ գնահատական չի տվել գործով առկա ապացույցներին և դատական ակտը չի վերանայել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Վերաքննիչ դատարանը, չնայած հիմնականում հիմնավոր է համարել դատարանի այն իրավական վերլուծությունը, համաձայն որի Շ.Սարգսյանի ապօրինի տիրապետության ներքո է գտնվում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի մի հատված, վճիռը բեկանել է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ փորձագետների եզրակացություններում առկա են հակասություններ, այսինքն, որ, ըստ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից նշանակված փորձաքննությունների արդյունքների՝ Շ.Սարգսյանի տիրապետման ներքո գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի չափը կազմում է 34,2 ք.մ, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացության համաձայն այդ հողատարածքի չափը կազմում է 23,3 ք.մ:

Բողոքաբերի կարծիքով, գործում առկա դատաշինարարատեխնիկական բոլոր փորձաքննությունների արդյունքներն էլ պարունակում են միևնույն տվյալները և Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշած հակասությունը դա ամեննին էլ հակասություն չէ, այլ երկու տարբերակ, որոնք հիմնված են տարբեր տեխանձնագրերի տվյալների վրա:

Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությամբ նույնպես ապացուցվում է, որ ըստ 1987թ. իրեն տրված տեխանձնագրի՝ սեփականության իրավունքով Ա.Խաչատրյանին պատկանող 23,3 ք.մ մակերեսով հողամասը փաստացի տիրապետվում է Շ.Սարգսյանի կողմից:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ այն է, եթե բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունելու հիմք և ձեռք բերված ապացույցները համեմատելու երկու անշարժ գույքերի տեխանձնագրերի ու դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների հետ, ապա կհամոզվել, որ ստորադաս դատարանի կողմից ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են ոչ թե վճիռը բեկանելու, այլ այն փոփոխելու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի լիազոր ներկայացուցչի՝ դատական նիստում տված ցուցմունքներին, որոնք միանշանակ համապատասխանում են երկու բնակելի տների տեխանձնագրերի և կողմերի կողմից փաստացի տիրապետվող հողամասերի տվյալներին: Անտեսվել է նաև գործում առկա նույն աշխատակազմի առ 16.06.2010թ. N 580 ԵԼ գրությունը, որով միանշանակ հաստատվում է այն փաստը, որ իր և հարևանի կողմից փաստացի օգտագործվող տարածքների չափերը չեն համապատասխանում տեխանձնագրերի չափագրումներին, ընդ որում՝ իր տարածքը նվազեցվել է և դրա հիման վրա հարևանի տարածքը ավելացվել:

Բողոքաբերը գտնում է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը չի խախտել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները /ինչպես նշված է վերաքննիչ բողոքում/ և ճիշտ է վարվել մերժելով երրորդ անգամ փորձաքննությունն նշանակելու մասին պատասխանողի միջնորդությունը, քանի որ առաջին ատյանի դատարանի կողմից նշանակված երկու փորձաքննությունների արդյունքներում առկա չեն էական հակասություններ. երկու եզրակացություններով էլ միանշանակ հաստատվել է, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող տնամերձի մի մասն անօրեն օգտագործվում է պատասխանողի կողմից, և երկրորդ փորձաքննության ժամանակ փորձագետին ուղղված հարցերի պատասխաններն ընդհանրապես չեն անդրադարձել նախկին փորձաքննության ընթացքում պարզաբանված հարցերի պատասխաններին: Պատասխանող կողմը չի համաձայնվել միայն այն փաստին, որը վերաբերվում է թիվ 41 տան և տնամերձի վիճահարույց սահմանագծի անկյունագծի չափին, քանի որ փորձագետը միանշանակ պատասխանել է, որ նման հարցադրումը ճիշտ չէ, որի պատճառով էլ պատասխանող կողմն առաջին ատյանի դատարանին միջնորդել էր նշանակել կրկնակի փորձաքննություն՝ նշված հարցը պարզելու համար:

Բողոքաբերի կարծիքով, Վերաքննիչ դատարանում գործի քննության ժամանակ անհրաժեշտություն չի եղել կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու համար, քանի որ, եթե դատարանում հաշվի է առնվել այն հանգամանքը, որ նախկին երկու փորձաքննությունների արդյունքներում առկա են հակասություններ, ապա պետք է առաջադրվեին այնպիսի հարցեր, որոնց պատասխանելով կհարթվեին այդ հակասությունները, իսկ եթե կրկին առաջադրել են նույն հարցերը, որոնք առաջադրվել էին նախկինում, ապա դա ինքնին նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կասկածանքի տակ է առել նախկին երկու փորձագիտական եզրակացությունների արժանահավատությունը կամ հիմնավորվածությունը, որի մասին, սակայն, խոսք անգամ չի եղել ինչպես հայցվորի, այնպես էլ պատասխանողի կողմից:

Բողոք բերողը նշում է նաև, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել օրենքի դրույթները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 16-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցապահանջը մասնակիորեն բավարարելու մասին:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վճռաբեկ բողոքի պատասխան բերողը պատճառաբանել է, որ Առաջին ատյանի դատարանի վճիռը վերաքննության կարգով մասնակիորեն բողոքարկելով, կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել, որը Վերաքննիչ դատարանի կողմից բավարարվել է: Ստանալով փորձագետի եզրակացությունը, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է մասնակիորեն բեկանել ստորադաս դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Բողոքի պատասխան բերողը խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհ փողոցի թիվ 43 բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է հայցվոր Ա.Խաչատրյանին, որին 2009թ. մայիսի 11-ին տրամադրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 100202 վկայականը /հատոր 1-ին, գ.թ. 20-24/, համաձայն որի՝ նրան պատկանող հողամասի չափը կազմում է 0,0344 հա, ինչը, սակայն, չի համապատասխանում 1974թ. և 1987թ. տեխնիկական անձնագրերում նշված նույն հողամասի չափին՝ 352 քառ.մ և հայցվորի կողմից փաստացի զբաղեցրած հողամասի չափին (հատոր 1-ին, գ.թ. 5-12):

2) Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհ փողոցի թիվ 41 բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է պատասխանող Շ.Սարգսյանին, հիմք՝ թիվ 726 առ 04.10.1988թ. տեխնիկական անձնագիրը / հատոր 1-ին, գ.թ. 43-44/:

3) Ըստ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման N 580 ԵԼ առ 16.06.2010թ. գրության՝ Գ.Նժդեհ փողոցի թիվ 43 բնակելի տան հողամասի փաստացի սահմանները երկարությամբ չեն համապատասխանում տեխնիկական անձնագրում նշված սահմաններին: Տեխնիկական անձնագրում նշված սահմաններին համապատասխան հողամասը փաստացի սահմանազատելու դեպքում հնարավոր կլինի կատարել նոր գրանցում (հատոր 1-ին, գ.թ. 19):

4) Դատաշինարարատեխնիկական փորձաքննության 01.12.2010թ. Հմ՝ 23013/10 և լրացուցիչ դատաշինարարատեխնիկական փորձաքննության 03.03.2011թ. Հմ՝ 3313/11 եզրակացությունների համաձայն՝ պատասխանող Շ.Սարգսյանը 1988թ. հոկտեմբերին տրված տեխնիկական անձնագրում նշված հողամասի չափից փաստացի 34.2 քառ. մետր մակերես ավել է տիրապետում Ա.Խաչատրյանի հետ ունեցած սահմանային հատվածում (հատոր 1-ին, գ.թ. 83-95, հատոր 2-րդ, գ.թ. 37-43):

5) Վերաքննիչ դատարանը 30.05.2011թ. որոշմամբ բավարարել է պատասխանող Շ.Սարգսյանի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի՝ կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը և նշանակել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն (որոշման եզրափակիչ մասում չանվանելով այն «կրկնակի»):

6) Ըստ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱ կազմակերպության կողմից կազմված Հմ՝ 11-1645 առ 24.11.2011թ. փորձագիտական եզրակացության՝ «ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի Գ.Նժդեհի փողոցի թիվ 43 հասցեում Ա.Հարությունյանը

փաստացի տիրապետում է 31,8/1,4+21,9+8,5/ մ² մակերեսով ըստ թիվ 2542 առ 07.1987թ. տեխնիկական անձնագրի տվյալների հատկացված հողամասից պակաս հողամաս, որից 23,3/21,9+1,4/մ² մակերեսով հողամասը փաստացի տիրապետվում է Շ.Սարգսյանի կողմից և 11,4/ 0,4+1,8+9,2/մ² մակերեսով հատկացված հողամասից ավել հողամաս» (հատոր 2-րդ, գ.թ. 113-120):

7) Վերաքննիչ դատարանը 2011թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ հիմնավոր համարելով Առաջին աստիճանի դատարանի այն իրավական վերլուծությունը, ըստ որի՝ պատասխանողի տիրապետության ներքո է գտնվում հայցվորին սեփականության իրավունքով պատկանող հողամասի մի հատվածը, այնուամենայնիվ մասնակիորեն բավարարել է պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը և, բեկանելով դատարանի վճիռը, գործն ուղարկել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության, այն պատճառաբանությամբ, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից նշանակված փորձաքննությունների եզրակացությունների համաձայն պատասխանողի տիրապետման ներքո գտնվող՝ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի չափը կազմում է 34.2քմ, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից նշանակված կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննության եզրակացության համաձայն, այդ հողատարածքի չափը կազմում է 23.3քմ:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով գործի հանգամանքները և բողոքի փաստարկները, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ որոշումը՝ բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ. ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր սեփականությունից այլ կերպ, քան միայն ելնելով հասարակության շահերից և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններում:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

ԼՂՀ դատական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է առաջին աստիճանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը:

Վերաքննիչ դատարանը ստորադաս դատարանի կայացրած դատական ակտերը վերանայելու միջոցով ստուգում է դրանց օրինականությունը և հիմնավորվածությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերաքննության ինստիտուտը չի նսեմացնում առաջին աստիճանի դատարանի՝ որպես արդարադատության հիմնական ինստիտուտի դերը և նշանակությունը:

Վերաքննիչ դատարանը, որպես դատական համակարգի երկրորդ օղակ, հատկապես կարևոր դերակատարում է իրականացնում առաջին ատյանի դատարանում թույլ տված դատական սխալների ուղղման հարցում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոքի հիմքերը չեն կարող փոփոխվել, լրացվել բողոքի քննության ընթացքում:

Վերաքննության սահմանները ամրագրված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածում, համաձայն որի.

1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերը ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու առաջին ատյանի դատարանի հաստատված փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանում գործի քննությունն իրականացվում է Գերագույն դատարանում գործի քննության կանոններով, եթե սույն բաժնում այլ կանոններ նախատեսված չեն:

Նշված նորմերի բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն ունի հստակ լիազորություններ (իրավասություններ) և գործում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ու նրա կողմից քաղաքացիական դատավարության իրականացման կարգը չի կարող կամայականորեն փոփոխվել առանձին գործերով:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական համակարգի մեջ մտնող տարբեր ատյանների դատարանները միմյանցից տարբերվում են իրենց իրավասությունների շրջանակով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է գործով ապացույցների տեսակները, որոնց թվին են դասվում նաև փորձագետների եզրակացությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի խախտմամբ ձեռք

բերված ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն.

1.Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

2.Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Գերագույն դատարանը հարկ է համարում սույն վեճի շրջանակներում փաստել, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում մյուս ապացույցների հետ...: Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունը նշանակվում է դատարանի որոշմամբ, որում շարադրվում են նաև դատարանի պատճառաբանությունները՝ նախկինում տրված փորձագիտական եզրակացությունների հետ նրա անհամաձայնության վերաբերյալ:

Ինչպես հետևում է գործի նյութերից, Առաջին աստիճանի դատարանը, հետազոտելով կողմերին պատկանող բնակելի տների տեխնիկական անձնագրերը և այլ փաստաթղթերը, փորձագետի եզրակացությունները, հաստատված է համարել, որ հայցվորի հողատարածքի չափերը գնալով նվազել են, իսկ, հակառակ դրան, պատասխանողի հողատարածքը ավելացել է, և որ պատասխանողն առանց որևէ իրավական հիմքի ապօրինի տիրապետում է հայցվորին սեփականության իրավունքով պատկանող տարածքից 34.2 քառ.մետր մակերես, ու մասնակիորեն բավարարել հայցը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշմանը գնահատական տալու անհրաժեշտությունից ելնելով, Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նոր ապացույց ընդունելու վերաքննիչ դատարանի իրավասությանը: Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ նոր ապացույցն ընդունվում է միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում. ապացույցն առաջին աստիճանի դատարանում չի ներկայացվել կողմերի կամքից անկախ պատճառներով, և այն ունի էական նշանակություն գործի լուծման համար: Այսինքն՝ նոր ապացույց ներկայացնելու ոչ բոլոր դեպքերումն է վերաքննիչ դատարանն այն ընդունում ու բեկանում ստորադաս դատարանի վճիռը և գործն ուղարկում նոր քննության, այլ միայն այն դեպքերում, երբ որ նոր ապացույցը վեճի լուծման համար ունի էական նշանակություն:

Նույն հոդվածի վերլուծությունից հետևում է նաև, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանին իրավունք է վերապահել ոչ թե ինքնուրույն նոր ապացույց ձեռք բերելու, այլ այն ընդունելու կամ չընդունելու: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը, ի խախտումն վերը նշված նորմերի պահանջների, իր լիազորությունների սահմանազանցմամբ, առանց պատշաճ հիմնավորման, գործով նշանակել է կրկնակի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն և, դատական նիստում չհետազոտելով փորձագետի եզրակացությունը, չլսելով կողմերի կարծիքը նշված եզրակացության վերաբերյալ, չբացահայտելով Առաջին աստիճանի դատարանի կողմից նշանակված փորձաքննությունների եզրակացությունների հակասությունները, չհիմնավորելով իր իսկ կողմից նշանակված փորձաքննության եզրակացության գործի լուծման համար էական նշանակություն ունենալու հանգամանքը, ստորադաս դատարանի վճիռը բեկանել է ու գործն ուղարկել նոր քննության, առաջացնելով գործի քննության անհարկի ձգձգում: Այդ այն դեպքում, երբ որ, ինչպես հետևում է գործի նյութերից, պատասխանող կողմն Առաջին աստիճանի դատարանում միջնորդել է նշանակել

լրացուցիչ, այլ ոչ թե կրկնակի փորձաքննություն, կասկածներ չունենալով առաջին փորձաքննության եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ: Ինչը բխում է նաև լրացուցիչ դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին 18.02.2011թ. որոշումից, համաձայն որի՝ Առաջին աստիճանի դատարանը փաստել է, որ դատարանի և դատավարության մասնակիցների մոտ կասկածներ չեն առաջացել 1.12.2010թ. փորձագիտական եզրակացության արժանահավատության կամ հիմնավորվածության վերաբերյալ (հատոր 2-րդ, գ.թ. 27-31): Լրացուցիչ փորձաքննության արդյունքներին չհամաձայնվելով՝ պատասխանողի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին, որն Առաջին աստիճանի դատարանի կողմից հիմնավոր մերժվել է:

Վերոշարադրյալների հիման վրա Գերագույն դատարանը փաստում է, որ Առաջին աստիճանի դատարանը սույն գործը քննելիս հանգել է ճիշտ հետևության, և Վերաքննիչ դատարանն անհիմն է բեկանել Առաջին աստիճանի դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության, անտեսելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման, դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տված վերը նշված հոդվածների պահանջների խախտումները Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու հիմք են:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Առաջին աստիճանի դատարանը դատաքննությամբ հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ կիրառել է նյութական և դատավարական իրավունքի համապատասխան նորմերը և կայացրել օրինական և հիմնավորված վճիռ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253 - 256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

1. Հայցվոր Արամայիս Հարությունի Խաչատրյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. դեկտեմբերի 16-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2011թ. ապրիլի 8-ի վճռին:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Կ.Բ.ՂԱՐԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Ի.Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ա.Է.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ